

13/07/2004
համար 175

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՍՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 21-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
26.04.05թ. թիվ 200Ն, 11.03.08թ. թիվ 64Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

13/07/2004
համար 175

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 21-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածը և 49-րդ հոդվածի 2-րդ կետը՝
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային
կազմակերպություններում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ
21-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

S. Սարգսյան

2004 թ. հուլիսի 19
Երևան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 21

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություններում դրամարկղային գործառնությունների իրականացումը, վարկային կազմակերպություններում կանխիկ դրամի ընդունման ժամանակ կեղծ դրամանիշերի հայտնաբերման դեպքերում ձեռնարկվող գործողությունները, վարկային կազմակերպություններում կանխիկ դրամի ինկասացիան:

1.2. Սույն կանոնակարգի իմաստով՝

ա) Կանխիկ դրամ՝ շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հանված, սակայն փոխանակման ենթակա Հայաստանի Հանրապետության դրամը, ինչպես նաև արտարժույթ՝ թղթադրամի և մետաղադրամի տեսքով, թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ:

բ) Դրամարկղ՝ տարածք, որտեղ իրականցվում է հաճախորդների դրամարկղային սպասարկումը:

գ) Դրամարկղի վճարային փաստաթղթեր՝ կանխիկ դրամի մուտքի և ելքի օրդերներ:

դ) Գանձապահ՝ վարկային կազմակերպության աշխատակից, որն իրականացնում է կանխիկ դրամի մուտքագրումը վարկային կազմակերպության դրամարկղ և ելքագրումը վարկային կազմակերպության դրամարկղից:

ե) Վարկային կազմակերպության հաճախորդ՝ վարկային կազմակերպության ծառայություններից օգտվող անձիք:

**ԳԼՈՒԽ 2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ**

2.1. Վարկային կազմակերպություններում դրամարկղային գործառնությունները՝ հաճախորդներից (ինկասատորներից) կանխիկ դրամի ընդունում - հանձնումը, վարկային կազմակերպություններում կանխիկ դրամի փոխադրումների փաստաթղթային ձևակերպումները, գանձապահին առհաշիվ գումարների տրամադրումը, վարկային կազմակերպության այլ աշխատակիցներին առհաշիվ տրված կանխիկ գումարների տրամադրումը և այդ գումարների նկատմամբ ժամկետային սահմանափակումները, արժեքների ի պահ ընդունումը, դրամարկղի ամփոփումը, դրամարկղում առկա արժեքների

պահպանումը, վարկային կազմակերպությունների դրամարկղերում առկա արժեքների ստուգումները իրականացվում են վարկային կազմակերպության կողմից սահմանվող կարգերի պահանջներով:

2.2. Վարկային կազմակերպությունը վարում է կանխիկ դրամի հաշվառման գիրք՝ (հետագայում դրամարկղի գիրք), որը պետք է լինի համարակալված և թելակարված (համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի): Վարկային կազմակերպության դրամարկղի գիրքը կնքվում և գրքի թերթերի քանակը վավերացվում է վարկային կազմակերպության գործադիր տնօրենի կողմից:

Արգելվում է դրամարկղային գրքում ջնջումներ և առանց ծանոթագրության ուղղումներ կատարել: Ուղղումների մասին ծանոթագրության կատարման համար անհրաժեշտ է սխալ կատարված գրանցման վրա գիծ քաշել՝ այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը և կատարել նոր գրառում: Կատարված ուղղումները վավերացվում են գանձապահի և գլխավոր հաշվապահի ստորագրությամբ՝ նշելով ուղղումը կատարելու ամսաթիվը:

2.3 Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները դրամարկղային գործառնությունները կանոնակարգող կարգերի մեկական օրինակները ընդունմանը հաջորդող մեկամսյա ժամկետում, այդ թվում՝ փոփոխություններն ու լրացումները, տրամադրում են Կենտրոնական բանկին, իսկ նոր բացված վարկային կազմակերպությունները այդ կարգերի մեկական օրինակները Կենտրոնական բանկին են տրամադրում վարկային կազմակերպության լիցենզիա ստանալուց հետո եռամսյա ժամկետում:

ԳԼՈՒԽ 3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԵՂԾ ԴՐԱՄԱՆԻՇԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԴԵՊԶԵՐՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Վարկային կազմակերպության դրամարկղ կանխիկ դրամի մուտքագրման ժամանակ գանձապահը դրամանիշերի վճարունակությունը ստուգելիս պետք է ղեկավարվի սույն գլխով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի թիվ 199 Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի կանոն 3-ով:

3.2. Դրամարկղ կանխիկ դրամի մուտքագրման ժամանակ կեղծ դրամանիշերի հայտնաբերման դեպքում պարտադիր կարգով կազմվում է ակտ 4 օրինակից (համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի), որը ստորագրվում է կեղծ դրամանիշը հայտնաբերող գանձապահի, հաճախորդի (կամ ինկասատորի) և վարկային կազմակերպության ղեկավարի կողմից: Ակտի մեկ օրինակը կեղծ դրամանիշերի հետ միասին հանձնվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն: Ակտի երկրորդ օրինակը ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ: Ակտի երրորդ օրինակը հանձնվում է կանխիկ դրամը հանձնող հաճախորդին (կամ կանխիկ դրամը առաքող բանկին), իսկ չորրորդ օրինակը մնում է կեղծ դրամանիշերը հայտնաբերող վարկային կազմակերպությունում:

ԳԼՈՒԽ 4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ԻՆԿԱՍՍՅԻԱՆ

4.1 Եթե Վարկային կազմակերպությունից բանկ կամ այլ վարկային կազմակերպություններ և հակառակ ուղղությամբ տեղափոխվող կանխիկ դրամի ընդհանուր գումարը գերազանցում է հինգ միլիոն դրամը, ապա փոխադրումներն իրականացվում են միայն ինկասացիոն կազմակերպությունների միջոցով՝ առաջնորդվելով վարկային կազմակերպության և ինկասացիոն կազմակերպության միջև կնքված պայմանագրի հիմունքներով:

4.2 Վարկային կազմակերպության և ինկասացիոն կազմակերպության միջև կնքված պայմանագրով սահմանվում են՝

ա) կանխիկ դրամի փոխադրման ձևերը,

բ) վարկային կազմակերպությունում կանխիկ դրամի ընդունման և հանձնման ձևերը,

գ) ինկասացիոն կազմակերպության աշխատակցի կողմից վարկային կազմակերպության պատասխանատու անձանց ուղեկցումը կանխիկ դրամի փոխադրման ժամանակ,

դ) կանխիկ դրամի փոխադրման ժամանակ կողմերի պատասխանատվությունը և պարտականությունները:

4.3. վարկային կազմակերպություններում կանխիկ դրամը ինկասացիոն կազմակերպությանը կարող է հանձնվել.

ա) կնքված պարկերով (կամ պայուսակներով): Մինչև ինկասատորներին հանձնելը, կանխիկ դրամը դրվում է պարկերի (կամ պայուսակների) մեջ և կնքվում վարկային կազմակերպության կնիքով: Պարկում (կամ պայուսակներում) դրվում է նաև վարկային կազմակերպության արժեքը ինկասատորներին հանձնողի կողմից ստորագրված և կնքված արժեքներին ուղեկցող ցուցակը (համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի):

բ) թղթադրամները՝ թերթ առ թերթ, մետաղադրամները՝ հատերով հաշվելով: Մինչև կանխիկ դրամը տեղափոխելը ինկասատորները ստուգում են առաքվող արժեքների և արժեքներին ուղեկցող ցուցակում նշված գումարի համապատասխանությունը:

4.4. Վարկային կազմակերպություններում ինկասացիոն կազմակերպությունից կանխիկ դրամի ընդունումը, կախված սպասարկող բանկում ինկասացիոն կազմակերպությանը կանխիկ դրամի հանձնման ձևերից, համապատասխանաբար իրականացվում է՝

ա) կնքված պարկերով (կամ պայուսակներով)՝ ստուգելով պարկերի (կամ պայուսակների) և կնիքների ամբողջական (չվնասված) լինելը: Պարկերի (պայուսակների) կամ դրանց կապարակնիքների վնասված լինելու դեպքում կազմվում է ակտ, որը ստորագրվում է արժեքներն ընդունողի և ինկասատորների կողմից:

Վնասված պարկերի (պայուսակների) արժեքները վերահաշվվում են թղթադրամները՝ թերթ առ թերթ, մետաղադրամները՝ հատերով: Պարկերում (պայուսակներում) առկա արժեքները համեմատվում են արժեքների ցուցակի հետ: Անհամապատասխանությունների դեպքում կազմվում է ակտ, որը հիմք է հանդիսանում հայտնաբերված պակասորդը լրացնելու համար: Ակտը ստորագրում են արժեքներն ընդունողը և ինկասատորները:

բ) Թղթադրամները՝ կապոցներով, իսկ մետաղադրամները՝ պարկերով, ստուգելով կապոցների փաթեթավորման ճշտությունը, թղթադրամների արմատների քանակը, փաթեթների, մետաղադրամների պարկերի և կնիքների ամբողջականությունն ու անվնաս լինելը:

Վնասված կնիքներով և պատռված փաթեթներով (պարկերով) կապոցներն ու պարկերը ընդունվում են՝ թղթադրամները՝ թերթ առ թերթ, մետաղադրամները՝ հատերով հաշվելով: Հաշվեսխալների հայտնաբերման դեպքում կազմվում է ակտ, որը հիմք է հանդիսանում պակասորդների հատուցման համար:

գ) Թղթադրամները՝ թերթ առ թերթ, մետաղադրամները՝ հատերով հաշվելով:

Վարկային կազմակերպության անվանումը -----

Կանխիկ դրամի հաշվառման գիրք

Սկսված է "----"-----200---թ.

Ավարտված է "----"-----200---թ.

Սկզբնական մնացորդը
առ 200 թ. դրությամբ
Գրամարկդային օրդերների համարները
մուտքի ելքի

----- դրամ
Մուտքը Ելքը

Վերջնական մնացորդը օրվա վերջի դրությամբ

----- դրամ

1՝ (ստորագրություններ)

2

ԱԿՏ

ԿԵՂԾ ԴՐԱՄԱՆԻՇԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

..... 200.....թ. թիվ

Սույն ակտը կազմված է

.....
(վարկային կազմակերպության անվանումը)

Գանձապահ.....կողմից
(գանձապահի անուն, ազգանուն, հայրանունը)

Հայտնաբերվել է կեղծ դրամանիշ, հանձնված

..... կողմից:
(հաճախորդի անվանումը)

Անվանական արժեքը, սերիան և համարը

.....
(անվանական արժեքը թվերով և բառերով)

Գանձապահ՝
(գանձապահի անուն, ազգանունը և ստորագրությունը)

Վարկային կազմակերպության ղեկավար՝
.....
(անուն, ազգանունը և ստորագրությունը)

Հաճախորդ՝
(հաճախորդի,անուն, ազգանունը և ստորագրությունը)

Կեղծ դրամանիշն ուղարկվել է ՀՀ համապատասխան իրավապահ մարմին

.....
(իրավապահ մարմնի անվանումը, որտեղ ուղարկվել է կեղծ դրամանիշը)

Առաքվող արժեքների ցուցակ

----- 200 թ.

Առաքող -----

Ստացող -----

Առաքում ենք արժեքներ ավագ ինկասատոր -----միջոցով:

Պարկը (կամ պայուսակը) կնքված է թիվ ----- կնիքով:

Արժեքների անվանումը
(արժույթը ըստ անվանական
արժեքների)

Գումարը

Պարկերի
(պայուսակների)
քանակը

Կնիքների
համարները

Ընդամենը

Դրամարկդի պատասխանատու
աշխատակցի ստորագրությունը՝

Ինկասատոր(ներ)ի
ստորագրություն(ներ)ը

Կնիքի տեղը՝

Ս Տ Ա Ց Ա Պ Ի Ր

----- 200 թ. ցուցակում նշված արժեքները

-----դրամ (գումարը՝ թվերով և բառերով)
որոնք առաքվել են ավագ ինկասատոր ----- միջոցով,
ստացանք:

Արժեքների ընդունումը կատարվել է՝ ստուգելով -----

Արժեքները ընդունեցին՝
պատասխանատու աշխատակիցներ

Արժեքները հանձնեցին
Ինկասատորներ՝